Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 06 փետրվարի 2023թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը և 19-րդ կետը՝ կայացել է՝ Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկության միջոցով:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Գնել Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արմեն Դանիելյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արմենուհի Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ
Բացակայում է՝	
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի գնումների պլանում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի գնումների պլանում փոփոխություն կատարելուն:

Կողմ 9, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամ Արմեն Դանիելյանը օրակարգում ներառված հարցին քվեարկել է կողմ՝ առաջարկելով ներկայացնել տեղեկություն/հիմնավորում 7503լ լրացուցիչ վառելիքի ձեռքբերման անհրաժեշտության վերաբերյալ:

Քվեարկությամբ որոշումն ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Հ. Սիմիդյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ
(խորհրդի քարտուղար) _____Վ. Բարսեղյան